ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԵՐՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում եւ դրանց համատեղ նիստերում «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման եւ Կառավարության կողմից փոփոխություններ կատարելու ժամկետացանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

2021 թվական, հոկտեմբերի 13
Երևան
ԱԺԽՈ-013-Լ

ՀԱՎԵԼՎԱԾ
Ազգային ժողովի խորհրդի
2021 թվականի հոկտեմբերի 13-ի
Ն ԱԺԽՈ-013-Լ որոշման

Ժամկետացանկ

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և դրանց համատեղ նիստերում «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախնական քննարկումների անցկացման, առաջարկների ներկայացման և Կառավարության կողմից փոփոխություններ կատարելու

1. **Երկուշաբթի, 25 հոկտեմբերի 2021թ., ժ.10.00**
   Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկում.
   - օրենքի նախագծի մշակման սկզբունքները և նախագծի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները (գնաճի սցենարը, բյուջեի դեֆիցիտը և նրա ծածկույթը, արտաքին և ներքին պարտքը),
   - եկամուտների ձևավորում (հարկային և մաքսային քաղաքականությունը),
   - բյուջեի ծախսերի կառուցվածքը և ծախսային քաղաքականությունը (սոցիալական հարցերի լուծումը բյուջեում և դոտացիաներ համայնքներին),
   - բյուջեի կատարման համար անհրաժեշտ օրենսդրական ապահովումը.
2. «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ ֆինանսների նախարարություն.
3. «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկի եզրակացության քննարկում.
4. ՀՀ կենտրոնական բանկի 2022թ. վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների նախագծի քննարկում:
   Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
   Կենտրոնական բանկի նախագահ Մ. Գալստյան

Հրավիրվում են՝ *Վարչապետ Ն.Փաշինյանը*
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ն.Մկրտչյանը
ԿԵ վիճակագրական կոմիտեի նախագահ Ս.Մնացականյանը

2.1. Երկուշաբթի, 1 նոյեմբերի 2021թ., ժ.10.00
Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ արտակարգ իրավիճակներ, ոստիկանություն, ազգային անվտանգության ծառայություն:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
Արտակարգ իրավիճակների նախարար Ա.Փիլոյան
ՀՀ ոստիկանության պետ Վ.Ղազարյան
ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Ա.Աբազյան

2.2. Երկուշաբթի, 1 նոյեմբերի 2021թ., ժ.12.00
Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ (նիստը դռնփակ է)

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ պաշտպանություն և պետական ռեզերվներ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
Արտակարգ իրավիճակների նախարար Ա.Փիլոյան
Պաշտպանության նախարար Ա.Կարապետյան
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Վ.Խաչատուրյան

3. Երեքշաբթի, 2 նոյեմբերի 2021թ., ժ.10.00
Ազգային ժողովի տնտեսական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

1. «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտների ձևավորում, հարկային և մաքսային քաղաքականություն:

2. «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ արդյունաբերություն, էներգետիկա և բնական պաշարներ, տրանսպորտ և կապ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, հանրային ծառայությունների կարգավորում , տնտեսական մրցակցության պաշտպանություն, անշարժ գույքի կադաստրի ոլորտ, քաղաքաշինություն և ջրային տնտեսություն,:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան

ԿԵ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռ.Բադասյան
էկոնոմիկայի նախարար Վ.Քերոբյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գ.Սանոսյան
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Վ.Խաչատուրյան
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Գ.Բաղրամյան
Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Գ.Գևորգյան
ԿԵ կադաստրի կոմիտեի ղեկավար Ս.Թովմասյան
ԿԵ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Ա.Ղուլարյան

Հրավիրվում է՝ *Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը*

4. **Չորեքշաբթի, 3 նոյեմբերի 2021թ., ժ.10.00**
Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ իշխանության պետական և դատական մարմիններ, պետական վերահսկողություն և կոռուպցիայի կանխարգելում:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար Է.Տարասյան
Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար - գլխավոր քարտուղար Վ.Նարիբեկյան
Վարչապետի աշխատակազմի ղեկավար Ա.Հարությունյան

Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավար Ս.Առաքելյան
Բարձրագույն դատական խորհուրդ՝ Դատական դեպարտամենտի ղեկավար Խ.Ղազարյան
Արդարադատության նախարար Կ.Անդրեասյան
Գլխավոր դատախազության գլխավոր քարտուղար Հ.Նավասարդյան
ՀՀ պետական վերահսկողության ծառայության ղեկավար Տ.Ուլիխանյան
ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Ա.Քյարամյան
ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահ Հ.Հարությունյան
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Ս.Խաչատրյան
Հաշվեքննիչ պալատի նախագահ Լ.Յոլյան
Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տ.Մուկուչյան

5. **Չորեքշաբթի, 3 նոյեմբերի 2021թ., ժ.16.00**
Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
Մարդու իրավունքների պաշտպան Ա.Թաթոյան

6. **Հինգշաբթի, 4 նոյեմբերի 2021թ., ժ.10.00**
Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ արտաքին գործերի նախարարություն, միջազգային կազմակերպություններին անդամակցելու վճարումներ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
Արտաքին գործերի նախարար Ա.Միրզոյան

7. **Հինգշաբթի, 4 նոյեմբերի 2021թ., ժ.13.00**
Ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետայինհարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ եվրոպական ինտեգրում:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
Արտաքին գործերի նախարար Ա.Միրզոյան

Հրավիրվում է՝ *էկոնոմիկայի նախարար Վ.Քերոբյանը*

8. **Հինգշաբթի, 4 նոյեմբերի 2020թ., ժ.15.00**
Ազգային ժողովի տարածաշրջանային և եվրասիական ինտեգրման հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ եվրասիական տնտեսական միություն և տարածաշրջանի մյուս երկրների հետ կապեր:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
Արտաքին գործերի նախարար Ա.Միրզոյան
Էկոնոմիկայի նախարար Վ.Քերոբյան

9. **Ուրբաթ, 5 նոյեմբերի 2021թ., ժ. 10.00**
Ազգային ժողովի աշխատանքի և սոցիալական հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ սոցիալական ապահովություն, նպաստներ և թոշակներ:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ն.Մկրտչյան

Հրավիրվում է՝ *Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը*

10. Ուրբաթ, 5 նոյեմբերի 2021թ., ժ.14.00

Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ տարածքային կառավարում, դոտացիաներ համայնքներին, պատվիրակված լիազորությունների իրականացում, բնապահպանություն/շրջակա միջավայր, գյուղատնտեսություն:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
Շրջակա միջավայրի նախարար Ռ.Պետրոսյան
Էկոնոմիկայի նախարար Վ.Քերոբյան
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գ.Սանոսյան
Երևանի քաղաքապետ Հ.Մարության և մարզպետներ

11. Երկուշաբթի, 8 նոյեմբերի 2021թ., ժ.10.00

Ազգային ժողովի առողջապահության հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ առողջապահություն:
Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
Առողջապահության նախարար Ա. Ավանեսյան

Հրավիրվում է՝ *Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը*

12. Երկուշաբթի, 8 նոյեմբերի 2021թ., ժ.14.00
Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի ու ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստ

Օրակարգը՝

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսված եկամուտներ և ծախսեր՝ գիտություն, կրթություն, մշակույթ, սպորտ, սփյուռք, երիտասարդություն և տեղեկատվություն:

Զեկուցողներ՝ Ֆինանսների նախարար Տ.Խաչատրյան
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վ.Դումանյան
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ Տ.Հակոբյան
Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Ա.Շիրինյան
Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զ.Սինանյան

Հրավիրվում են՝ *Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը*
ԿԳՄՍ նախարարության ԵՄ գիտության կոմիտեի նախագահ Ս.Հայոցյանը

13. Մինչև 11 նոյեմբերի 2021թ. ժ. 18.00

1. **Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2022թ.պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումների ամփոփում:**
2. **Ազգային ժողովի պատգամավորները և խմբակցությունները «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկությունները ներկայացնում են Ազգային ժողովի աշխատակազմ:**

14. Ուրբաթ, 12 նոյեմբերի 2021թ. /մինչև ժ. 15.00/

Ազգային ժողովի աշխատակազմը Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի

նախագծի քննարկումների արդյունքում ձևավորված գրավոր առաջարկությունները ներկայացնում է Կառավարություն:

15. Երեքշաբթի, 16 նոյեմբերի 2022թ.

Ազգային ժողովի ութերորդ գումարման երկրորդ նստաշրջանի 2021 թվականի նոյեմբերի 16-ին գումարվող հերթական նիստերում «Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկում:

Ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար

Վ. Նարիբեկյան